Հ. Ա. ՕՐԲԵԼՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏԱՇՐՋԱՆ

1971 թ. դեկտեմբերի 8—9-ին Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկանատի, հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված սովետական ականավոր արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Արդարի Օրբելու հիշատակին։

Գիտական նստաշրջանը բացեց պատմության ֆակուլտետի դեկան, դոցենտ Հ. Ա. Պետրոսյանը։ «Հ. Ա. Օրբելու կյանքն ու գործը» զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Գ. Ղաֆադարյանը։ Նա նշեց, որ Հ. Ա. Օրբելին իր գիտական գործունեությունը սկսել է դեռ 1906 թ.՝ Պետերբուրգի համալսարանում ուսանելու ժամանակ, երբ իր ուսուցչի՝ Ն. Մառի ղեկավարությամբ սկսեց մասնակցել Անիի պեղումներին։ Հետագայում՝ 1917 թ. նա Անիի մասին գրեց կարևոր աշխատություններ։ 1911—1912 թթ. Օրբելին եղավ Արևմտյան Հայաստանում, ուսումնասիրեց Ախթամարի տաճարը, մոկաց բարբառը, զբաղվեց քրդագիտությամբ, 1916 թ. հայտնաբերեց ուրարտական 400 տողանոց տարեգրությունը, 1936 թ. ղեկավարեց Ամբերդի պեղումները։

Զեկուցողը կանգ առնելով գիտության մեջ Հ. Օրբելու կատարած առաջընթացի վրա, նշեց, որ 1911 թ. Պետերբուրգի համալսարանի երկու ֆակուլտետներն ավարտելուց հետո, 1913 թ. նա հանձնեց մագիստրոսական քննություններ, 1919 թ. հաստատվեց Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, 1920 թ. նշանակվեց Պետական էրմիտաժի բաժնի վարիչ, իսկ 1934 թ.՝ ընդհանուր դիրեկտոր։ 1924 թ. Հ. Ա. Օրբելին ընտրվեց ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1934 թ.՝ իսկական անդամ։

Մինչև իր կյանքի վերջը (1961 թ.) Օրբելին օգնում և ուղղություն էր գույց տալիս Հայաստանի հնագետներին։ Նա խոշոր վիմագրագետ էր։ Իր ուսուցիչ Ն. Մառի հետ նա հիմք դրեց հայերեն վիմագրությունների գիտական հրատարակությանը։ Հ. Ա. Օրբելին մեծ արևելագետ էր և Սովետական Միության ճանաչված հնագետ։ Նա միաժամանակ զբաղվում էր վրացագիտության, իրանագիտության և Կովկասյան Աղվանքի հարցերով։

Նրա խմբագրությամբ և առաջաբանով լույս տեսան «Սասունցի Դավիթ» դյուցազներգության համահավաք հայերեն բնագիրը և ռուսերեն թարգմանությունը, «Ընձենավորի» ռուսերեն թարգմանությունը։ Հ. Ա. Օրբելին ղեկավարեց Ֆիրդուսու, Ալիշեր Նավոյի, Նիզամու հորելյանների համամիութենական տոնակատարությունները և աշխատություններ գրեց նրանց մասին։

Լինելով աշխարհի խոշորագույն թանգարանագետներից մեկը, նա մեծ ջանքեր ներդրեց էրմիտաժի մեծացման ուղղությամբ, որի շնորհիվ այն պատկերասրահից վերածվեց աշխարհահռչակ կուլտուր-պատմական թանգարանի։

Հ. Ա. Օրբելին հայ արվեստի և ճարտարապետության մեծագույն գիտակներից էր։ Մեծ է նրա դերը Հայաստանում գիտության զարգացման և հայագիտական բարձրակարգ կադրերի պատրաստման գործում։ Նա էր ղեկավարում ՍՍՀՄ ԳԱ հայկական բաժանմունքը, իսկ 1943 թվականին դարձավ Հայաստանի նորաստեղծ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտը։

Անգնահատելի են Հայրենական մեծ պատերազմի տարիներին էրմիտաժի կուլտուր-պատմական գանձերը կործանումից փրկելու համար Հ. Ա. Օրբելու մատուցած ծառայությունները։

Օրբելին սովետական ժողովրդին և գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար պարգևատրվել է Լենինի երկու շքանշանով։

Այնուհետև «Հ. Օրբելին Շիրակացու «Խնդրագրքի» թարգմանիչ և մեկնաբան» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ պրոֆ. Ա. Գ. Արուաճամյանը։ Նա նշեց, որ Հ. Ա. Օրբելին առաջին անգամ գրաբարից ռուսերեն է թարգմանել Ա. Շիրակացու «Խնդրագիրքը», մեկնաբանել և ըստ պատշաճի գնահատել այն։ Նա իր արժեքավոր թարգմանության առաջաբանում ցույց է տվել Շիրակացու առանձին խնդիրների մեջ արծարծված հարցերի կարևորությունը սոցիալ-տնտեսական և քաղաքական առումով, ինչպես նաև կոահել, որ «Խնդրագրքին» պետք է նախորդած

լիներ թվաբանական չորս գործողությունների աղյուսակը, որը լիովին հաստատվեց հետագայում։

Դոցենտ Գ. Մ. Սուրադյանը զեկուցեց «Ղազար Փարպեցու «Պատմության» նորահայտ պատառիկը» թեմայով։ Զեկուցողը ընդգծեց, որ Փարպեցու «Պատմության» գիտությանը հայտնի ամենահին ձեռագիրը 1672 թ. ընդօրինակություն է։ Մյուս պատմիչների գործերի նման՝ Փարպեցու երկը ևս շուրջ 1100 տարվա ընդօրինակության ընթացքում ընդմիջարկվել է, խմբագրվել ու այլ փոփոխություններ ենթարկվել։ Բնագրի վերականգնման լավագույն միջոցը վաղ շրջանի պատառիկներ կամ հատվածներ երևան բերելն է, որոնք ավելի քիչ են այլափոխված։ Այդ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լենինգրադի հայկական ձեռագրական հավաքածոյի ղրչագրերից մեկում իբրև պահպանակ գործածված Փարպեցու «Պատմության» XI դ. դրչության մեկ թերթ, որի ուսումնասիրությունից պարզվում է, որ այն Փարպեցու մեզ հայտնի տեքստի համեմատությամբ ունի կարևոր տարբերություններ, որոնք էական նպաստ են բերում տեքստի քննության և հետագա ընդմիջարկությունների օտարմանը։ Պատառիկը ուշագրավ նորույթներ է ընձեռում նաև հայոց լեզվի բառագանձի առումով։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ա. Ավագյանի զեկուցումը նվիրված էր «Հակ» հարկային տերմինը վիմական արձանագրություններում» թեմային։ Զեկուցման մեջ ի մի բերելով այդ տերմինի բոլոր վիմագիր վկայությունները, զեկուցողը ճշգրտեց դրանց ընթերցումները և վերծանումները, ըստ ամենայնի պարզելով իմաստները։ Մի շարք դեպքերում նա առաջարկում է հակ բառով հակային տերմինների նոր ընթերցումներ և մեկնություններ, որոնք գդալի չափով տարբերվում են նախորդ բացատրություններից (օրինակ, դեմեթերահակ-ի վերծանությունը Կոթավանքի արձանագրության մեջ)։

Զեկուցողը իրավացիորեն նկատեց, որ «հակ» բառի և նրանով կազմված տուրքային մյուս անվանումների մեկնությունը կարևոր նշանակություն է ստանում միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի պարզաբանման համար, մանավանդ որ սկզբնաղբյուրներից այդ մասին քիչ բան կարելի է իմանալ։

Արթիկի դամբարանադաշտի ժամանակագրական սահմանների որոշմանն էր նվիրված դոցենտ Ս. Հ. Սարգսյանի զեկուցումը։

Դոցենտ Յ. Ի. Մկրտումյանի զեկուցումը նվիրված էր «Հայ պատմա-ազգագրական ատլասին» և ժողովրդական մշակույթի ուսումնասիրման գործում նրա դերին։ Նա ցույց տվեց, որ «Հայ պատմա-ազգագրական ատլասի» նպատակն է կոնկրետ նյութերի մանրակրկիտ հավաքման, սիստեմավորման և ամփոփման հիման վրա արտացոլել մեր ժողովրդի կենցաղը, նյութական և հոգևոր մշակույթի տարրերը, նրա անցյալն ու ներկան, բացահայտել հայ ժողովրդի էթնիկական ինքնատիպությունը, սահմանել առանձին ազգագրական երևույթների տարածման արմատները և ի հայտ բերել պատմականորեն ձևավորված տեղական առանձնահատկությունները։

Մոխրաբլուրի պեղումներին նվիրված զեկուցմամբ հանդես եկավ ասպիրանտ Կ. Ե. Արեշյանը։ Նա նշեց, որ պեղումներից հայտնաբերված բազմաթիվ առարկաներ լույս են սփռում Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների նյութական և հոգևոր մշակույթի բազմաթիվ կողմերի վրա։ Նա Մոխրաբլուրի հնագույն շինարարական շերտի հիմնադրումը թվագրեց մ. թ. ա. IV հազարամյակի վերջով, կամ IV—III հազարամյակների սահմանագլխով, իսկ վերին շերտը՝ ոչ ուշ քան մ. թ. ա. XXIII դարով։

Նստաշրջանի վերջում եզրափակման խոսք ասաց հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը։

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ։